

**Ռոդնի Դաքեայան, 1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արտադատական հնարավոր եղանակները, Եր., «Փրինսիփո», 2015, 416 էջ\*:**

**Բանալի բառեր** – Հայոց ցեղասպանություն, Սևրի պայմանագիր, կողիֆիկացիա, հատուցման հարց, միջազգային դատարան, ներման բանաձև, փորձարկումներ

Հայոց ցեղասպանությանը՝ որպես հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճրի, վաղուց արդեն գիտական գնահատական է տրվել ոչ միայն հայ, այլև օտարազգի պատմաբանների ու ցեղասպանագետների կողմից. լույս են տեսել հազարավոր հետազոտություններ, հրապարակվել են բազմաթիվ պետությունների արխիվներում պահվող փաստաթղթեր, որոնք հաստատում են անհերքելի ճշմարտությունը:

Սակայն Թուրքիան ոչ միայն չի համակերպվում նման իրողության հետ, այլև պետական մակարդակով վարում է ժխտման քաղաքականություն՝ հենց իր ջանքերով Հայոց ցեղասպանության հարցը վերածելով քաղաքական հիմնախնդրի: Ժամանակակից Թուրքիայի կողմից որդեգրված այս վարքագիծը հայությանն այլ էլք չի թողնում, քան Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը միջազգային իրավական դաշտ տեղափոխելն ու այն միջազգային դատական ատյանում լուծելը:

Իրավական հարթության վրա՝ միջազգային իրավունքի տեսակետից, Թուրքիայի պատասխանատվության ուսումնասիրության հարցում բավականին լուրջ ներդրում ունի հայազգի հայտնի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը<sup>1</sup>: Այս հիմնահարցի ուսումնասիրությանը իրենց աշխատություններն են նվիրել նաև հայ հետազոտողներ Շ. Թորիկյանը<sup>2</sup>, Վ. Տատրյանը<sup>3</sup>, Պ. Օհանյանը<sup>4</sup>, Հ. Հակոբյա-

Ը (ԺԳ) փաթիլ, թիվ 2 (54) ասպիլ-հանիս, 2016

ՎԿՎ համահայկական հանդես

\*Ընդունվել է տպագրության 15.06.2016:  
1 Տևն **Барсегов Ю.**, Геноцид армян – преступление против человечества, Ер., 1990; Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, Ер., 1995; Геноцид армян – преступление по международному праву, М., 2000; Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндюз Актана), М., 2002; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, т. 2, ч. 1, М., 2003, т. 2, ч. 2, М., 2005.  
2 Տևն **Թորիկյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պեյրութ, 1976:  
3 **Dadrian V. N.**, The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, 1999.  
4 Տևն **Оганян П.**, Геноцид армянского народа и защита прав человека, Ер., 2004.

նը<sup>5</sup>, Ի. Արաբյանը<sup>6</sup>, Վ. Վարդանյանը<sup>7</sup>, Ա. Պապյանը<sup>8</sup> և ուրիշներ, իսկ օտարազգի մասնագետներից՝ Ա. դե Զայասը<sup>9</sup>, Զ. Վերհովենը<sup>10</sup>, Իվ Տերնունը<sup>11</sup> Շ. Բասիունիսի<sup>12</sup> և ուրիշներ:

Միանգամայն բնական է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրյակին ու դրա ընթացքում այդ հանցագործության հետևանքների հաղթահարման իրավական հիմքերին ու հնարավորություններին նվիրված նոր աշխատություններ պետք է լույս տեսնեն: Ուստի սփյուռքահայ իրավաբան Ռ. Դաքեսյանը, որը Հայոց ցեղասպանության իրավական հետևանքների վերացման հիմնահարցերին նվիրված դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Լիոնի համալսարանում, 2015-ին գրքի տեսքով այն հրատարակել է մայր հայրենիքում:

Մակայն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ լույս տեսած այս աշխատությունը անմիջապես տարակուսանք է առաջացնում՝ գրքի վերնագրում «Հայոց ցեղասպանության» փոխարեն «1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածներ» ձևակերպումը գործածելու պատճառով: Փաստորեն ի սկզբանե հեղինակը Հայոց ցեղասպանությունը դեռևս ապացուցման ենթակա հարց է համարում: Եվ, իսկապես, Ռ. Դաքեսյանն իր գրքում առանձին գլուխ է նվիրել հայերի նկատմամբ իրականացված զանգվածային բնաջնջման փաստը 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի ցեղասպանության հանցագործության սահմանման ու դրա հանցակազմի հատկանիշների տեսակետից քննարկելուն՝ հանգելով այն եզրակացությանը, որ «1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածներում» առկա են ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի ցեղասպանության հանցագործության հատկանիշները<sup>13</sup>: Հարց է առաջանում՝ եթե հեղինակն իր աշխատության մեջ հանգելու էր նորություն չհանդիսացող նույն եզրահանգմանը, ապա ինչ իմաստ ուներ գրքի նման վերնագրի ընտրությունը:

Բավականին հակասական տեսակետներ ու դիրքորոշումներ են առկա աշխատության առաջին և երկրորդ մասերի ու հատկապես եզրակացության մեջ:

Ընդհանուր առմամբ կիսելով 1899 թ. Հաագայի II կոնվենցիայի դրույթների և մասնավորապես այդ փաստաթղթի նախաբանում տեղ գտած «Մարտենսի վերապահման» վերաբերյալ հեղինակի մոտեցումները, այդուհանդերձ, չենք կարող համաձայնել այն մտքի հետ, որ «Մարտենսի վերապահումն» ուղղակի ազդեցություն է ունեցել ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթների վրա: Այս տեսակետը հիմնավորելու համար՝ Դաքեսյանը մեջբերում է կատարում կոնվենցիայի 1-ին հոդվածից, որում իբր նշված է, որ «ցեղասպանությունը մարդկանց իրավունքի դեմ հանցագործություն է»<sup>14</sup>: Իրականում կոնվենցիայի 1-ին հոդվածում ցեղա-

5 Տես **Հակոբյան Հ.**, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000: Տես նաև՝ Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002:

6 Տես **Արաբյան Ի.**, Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

7 Տես **Վարդանյան Վ.**, Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N 1 (17), Եր., 2006:

8 Տես **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007; Հնչեցրեք զանգերը, սա մեր վերջին Սարդարապատն է, Եր., 2009: Հայոց պահանջատիրության հիմնախնդիրներն ու հեռանկարները, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Եր., 2012:

9 Տես **Alfred de Zayas**, Memorandum on the genocide against Armenians 1915–1923 and the application of the 1948 Genocide Convention, 2004.

10 Տես **Verhoeven Joe**, The Armenian People and International Law// A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent Peoples' Tribunal, London, 1985.

11 Տես **Տերնուն Ի.**, Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003:

12 Տես **Bassiouni Cherif**, Crimes Against Humanity in International Criminal Law, Dordrecht/Boston; London, 1992.

13 Տես **Դաքեսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 102–151:

14 Տես **Դաքեսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 45:

սպանությունը որակվում է որպես հանցագործություն ոչ թե «մարդկանց իրավունքի», այլ «միջազգային իրավունքի» դեմ<sup>15</sup>: Կարելի էր ենթադրել, որ հնարավոր է այս վրիպումը ֆրանսերենից սխալ թարգմանության հետևանք է, սակայն նույն միտքը և մեջբերումը կրկնվում է<sup>16</sup>: Հաագայի կոնվենցիայի հոդվածի բովանդակությունը խեղաթյուրելու փոխարեն հեղինակը ընդամենը պետք է նշեր, որ «Մարտենսի վերապահումը» կոնվենցիայի վրա ունեցել է ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված ազդեցություն: Դա իրականացվել է ըստ Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության 6-րդ կետի c ենթակետի, համաձայն որի՝ տրիբունալն օժտվում է քննելու նաև «մարդկության դեմ գործած հանցագործությունների» գործերը<sup>17</sup> և կոնվենցիայի նախապատրաստման փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96 (I) բանաձևի միջոցով, որում նշվում է ցեղասպանության հանցագործության հակամարդկային բնույթը և հանձնարարվում է մշակել համապատասխան կոնվենցիա<sup>18</sup>: Իսկ ահա բուն կոնվենցիայի նախաբանում իբրև այն ընդունելու առաջին շարժառիթ նշվում է հենց ՄԱԿ-ի 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96 (I) բանաձևը<sup>19</sup>: Նման անհարկի վրիպումները սովոր են գցում ցանկացած շտրիակալ աշխատանքի վրա և նսեմացնում նրա գիտական արժեքը:

Որևէ նպատակ չունենալով նսեմացնել «Մարտենսի վերապահման» նշանակությունը Հայոց ցեղասպանության իրականացման պահին այն հանցավոր և դատապարտելի արարք որակելու հարցում՝ այդուհանդերձ պետք է նշենք, որ այն շրջանառվել է միայն 1899 թ. սկսած, ինչից կարելի է եզրակացնել, որ մինչ այդ խաղաղ բնակչության զանգվածային սպանությունները և մասնավորապես դրանից առաջ Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության նկատմամբ 1894-1896 թթ. կոտորածները թույլատրելի են եղել: Թեև հեղինակը նշում է, որ «Մարտենսի վերապահումը» որոշ կապ ունի 1868 թ. դեկտեմբերի 11-ին Սանկտ Պետերբուրգում ընդունված «Պայթուցիկ և հրկիզող փամփուշտների օգտագործման արգելքի մասին» հռչակագրի ներածականի հետ, որում նշվում էր, որ այն զինատեսակների գործածությունը, որոնք անհարկի խորացնելու են մարտունակությունը կորցրած մարդկանց տանջանքները կամ անխուսափելի են դարձնելու նրանց մահը, մարդասիրական օրենքներին հակառակ են համարվելու<sup>20</sup>: Սակայն տվյալ դեպքում «մարդասիրությունը» վերաբերում է հակառակորդ բանակի կազմում կռվող զինվորներին որոշ զինատեսակների կիրառմամբ տանջալից մահ չպատճառելուն, այլ ոչ թե խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններ կիրառելուն: Նման մտայնություն թույլ չտալու համար հեղինակը պարտավոր էր անդրադառնալ մինչև «Մարտենսի վերապահումը» և նույնիսկ մինչև Սանկտ-Պետերբուրգի հռչակագիրը միջազգային սովորության իրավունքում հաստատված մարդասիրական միջամտությունների պրակտիկային, որոնք իրենց հերթին նպաստեցին նույն «Մարտենսի վերապահման» ընդունմանը:

Աշխատանքը միանշանակ կշահեր, եթե հեղինակն անդրադառնար հատկապես Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացված մարդասիրական միջամտությունների շարքին, որոնց ընթացքում եվրոպական երկրները դեռ 18-րդ դարի վերջից սկսած, բազմիցս խախտել են այդ երկրի ինքնիշխանությունը, միջամտել նրա ներքին գործերին՝ հարկադրելով Բարձր Դռանը կայսրության քրիստոն-

15 Տե՛ս Права человека. Сборник международных договоров. Т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780.

16 Տե՛ս Դաբեյան Թ., նշվ. աշխ., էջ 71:

17 Տե՛ս Нюрнбергский процесс: Сборник материалов. М., 1954, т. 1, с. 23-24.

18 Տե՛ս Резолюция, принятые Генеральной Ассамблеей на Второй части Первой сессии с 23 октября по 15 декабря 1946 г., Нью-Йорк: ООН, 1947, с. 140.

19 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, с. 780.

20 Տե՛ս Դաբեյան Թ., նշվ. աշխ., էջ 40:

յաների կյանքն ու գույքը պաշտպանելու պարտավորություններ ստանձնել<sup>21</sup>: Փաստորեն, 18–19-րդ դարերի ընթացքում մարդասիրական միջամտությունների պրակտիկան լայնորեն տարածված էր, այն ոչ միայն դարձել էր միջազգային սովորության իրավունքի ընդունված սկզբունքը, այլև սկսել էր տեղ գտնել համապատասխան պայմանագրերում՝ աստիճանաբար վերածվելով նաև միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքի: Բնական է, որ նման զարգացումները նախադրյալներ ստեղծեցին Հաագայի կոնվենցիայում «Մարտենսի վերապահման» ամրագրման համար:

Տարակուսանք է առաջացնում այն, որ հայ հետազոտողը պարզապես շրջանցել է Հայկական հարցը միջազգայնացնող Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը, որոնցով Օսմանյան կայսրությունը հայերի անվտանգությունն ապահովելու միջազգային պարտավորություններ էր ստանձնել, սակայն հետագայում խախտելով այդ պարտավորությունները՝ կազմակերպել 1894–1896 թթ. համիդյան կոտորածները, 1909 թ. կիլիկիահայության ջարդերը և վերջապես Մեծ Եղեռնը: Իր ավելի քան 400 էջ ծավալ ունեցող աշխատության մեջ Դաքեայանը միայն մեկ անգամ է հիշատակում Բեռլինի վեհաժողովի մասին, այն էլ՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից այդ վեհաժողովին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ ներկայացված տեղեկությունների առիթով<sup>22</sup>:

Աշխատանքում շատ հպանցիկ անդրադարձ է կատարված նաև մի այնպիսի կարևոր փաստաթղթի, ինչպիսին է Անտանտի երեք տերությունների 1915 թ. մայիսի 24-ի հռչակագիրը: Հիմնականում ներկայացված է հռչակագրի տեքստը<sup>23</sup> առանց բովանդակային վերլուծության, մինչդեռ այն Հայոց ցեղասպանության կատարման պահին հայերի զանգվածային սպանություններին տրված ոչ միայն քաղաքական, այլև իրավական գնահատական էր պարունակում: Հատկանշական է, որ ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի ընդունումից առաջ Միավորված ազգերի Պատերազմական հանցագործությունների հանձնաժողովը 1948 թ. մայիսի 28-ին Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում հայերի զանգվածային սպանություններին տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» ձևակերպումը նույնական համարեց այն հանցագործությունների հետ, որոնք Նյուրնբերգյան դատավարության ժամանակ միջազգային իրավունքի կողմից որակվել էին իբրև անմարդկային գործողություններ սեփական հպատակների նկատմամբ, այսինքն՝ ցեղասպանություն<sup>24</sup>:

Աշխատության տարբեր էջերում Արևմտյան Հայաստանի փոխարեն օգտագործվում է արհեստածին «Արևելյան Անատոլիա» ձևակերպումը<sup>25</sup>, որով թուրքերն անվանում են հայոց հայրենիքի մեծագույն մասը: Աշխատանքում թույլ են տրվել նաև որոշ փաստական սխալներ: Նշվում է, որ Սևրի պայմանագիրը կնքվել է ՄԱԿ-ի հովանավորության ներքո<sup>26</sup>: Խոսքն, անշուշտ, ոչ թե 1945 թ. հիմնադրված ՄԱԿ-ի, այլ դրան նախորդած միջազգային կազմակերպության՝ Ազգերի Լիգայի մասին է, որը հեղինակի կողմից շփոթվում է ՄԱԿ-ի հետ նաև աշխատության հաջորդ էջերում<sup>27</sup>:

Եթե ընդունենք, որ նման բնույթի սխալները կարող են լինել ո՛չ հեղինակի մեղքով, այլ ոչ ճիշտ թարգմանության արդյունքում, ապա բացարձակապես անընդունելի է Դաքեայանի այն պնդումը, թե Լոզանի պայմանագիրը փոխարինել է

21 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Մարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 12–29:

22 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 224:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 62–63:

24 Տե՛ս *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества*, т. 2, ч. 2, с. 651.

25 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 18, 185, 323, 369, 398:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 196, 197:

Սևրի պայմանագրին<sup>28</sup>, քանզի դրանք բացարձակապես տարբեր փաստաթղթեր են: Սևրի պայմանագիրը չի կարող համարվել փոխարինված Լոզանի պայմանագրով՝ ելնելով հետևյալ հանգամանքներից:

1. Լոզանի պայմանագրում ոչ մի հիշատակում չկա Սևրի մասին և առավել ևս ոչ մի դրույթ չկա Հայաստանի կամ հայերի վերաբերյալ: Սևրի պայմանագրի կարևոր դրույթներից մեկը հանդիսացող Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչման և նրա սահմանների ճշգրտման հարցը բացակայում է Լոզանի պայմանագրում: Սա նշանակում է, որ երկու պայմանագրերի կարգավորման առարկաները տարբեր են:

2. Սևրի պայմանագիրը փոփոխելու կամ այն նորով փոխարինելու մտադրության մասին այն ստորագրած պետությունների կողմից չի հայտարարվել Լոզանի խորհրդածոդովում, ինչը 1969 թ. Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 41-րդ հոդվածի պահանջն է<sup>29</sup>: Բացի այդ՝ միջազգային պայմանագրային իրավունքի հանրահայտ և հաստատված կանոն է, որ պայմանագիրը ստորագրող պետություններն իրավունք ունեն մասնակցելու նրա փոփոխության ուղղությամբ տարվող բանակցություններին և մշակմանը, որը սահմանված է Վիեննայի կոնվենցիայի 40-րդ հոդվածով<sup>30</sup>: Մինչդեռ Խորհրդային Հայաստանը՝ իբրև Սևրի պայմանագիրը ստորագրող պետություններից մեկի՝ Հայաստանի Հանրապետության իրավահաջորդ, նույնիսկ հրավիրված չէր մասնակցելու Լոզանի խորհրդածոդովին<sup>31</sup>: Այսինքն՝ երկու պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնպես տարբեր են:

Պայմանագրի առարկայի և կողմերի տարբերությունը հիմք է տալիս ասելու, որ Լոզանի պայմանագիրը Սևրի պայմանագրի հետ առնչություն չունեցող լրիվ նոր պայմանագիր է: Եթե անգամ մի պահ պատկերացնենք, որ Սևրը փոխարինվել է Լոզանով, ապա անգամ այդ դեպքում, Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն, պայմանագրի կողմերը կարող են համաձայնության գալ՝ փոխելու համաձայնագիրը միայն իրենց միջև, եթե խնդրո առարկա փոփոխությունը չի խախտում ստորագրող մյուս կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները<sup>32</sup>: Այսինքն՝ այդ դեպքում էլ Լոզանի պայմանագիրը անզոր և անվավեր է այն չափով, որ չափով որ կարող է փոփոխության ենթարկվել Սևրի պայմանագրում ամրագրված Հայաստանի իրավունքները<sup>33</sup>: Ավելացնենք, որ Լոզանի պայմանագիրը որևէ պարտավորություն չի առաջացրել դրան չմասնակցած Հայաստանի համար, այլ լրացուցիչ պարտավորություններ է առաջացրել Թուրքիայի Հանրապետության համար իր տարածքում բնակվող ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները հարգելու առումով:

Մեկ այլ տեղում նշվում է, որ Օսմանյան կայսրությունը մասնատվեց Լոզանի պայմանագրով<sup>34</sup>, մինչդեռ կայսրության մասնատման գործընթացը սկսվել էր դրանից առաջ և իրավական առումով այն առաջին անգամ ամրագրվել էր դեռ Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Լոզանի պայմանագիրն ընդամենը վերահաստատեց դրանք՝ Թուրքիայում իշխանության եկած քեմալական նոր վարչակարգին պարտադրելով դեռևս Սևրի պայմանագրի հոդվածներով նախատեսված Օսմանյան կայսրությունից արաբական տարածքների անջատումը,

28 Տե՛ս նույն տեղում, էջ 66, 189, 197, 278:

29 Տե՛ս Международное право в документах, сост. Сборника Н.Т. Блатова, М., 1982, с. 83.

30 Տե՛ս նույն տեղում, с. 82.

31՝ Պողոս Նուբարից հետո Գարրիել Նորատունկյանի գլխավորած արևմտահայերի ազգային պատվիրակությանը, որը չէր ներկայացնում Խորհրդային Հայաստանը, թույլ տրվեց խոսել միայն Լոզանի խորհրդածոդովի ենթահանձնախմբում:

32 Տե՛ս Международное право в документах, с. 83.

33 Տե՛ս ԹՊՐԻԿԵԱՆ Ը., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, էջ 88-89:

34 Տե՛ս ԳԱՐԵՅԱՆ Ռ., նշվ. աշխ., էջ 180:

ինչն, ի դեպ, արդեն տեղի էր ունեցել մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը<sup>35</sup>: Ցավոք, Լոզանի պայմանագրում տեղ չգտան Հայաստանի և Քուրդիստանի անջատման մասին հոդվածները, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է Սևրի ու Լոզանի պայմանագրերի տարբեր լինելը և երկրորդով առաջինը չփոխարինվելու փաստը:

Անդրադառնալով 1948 թ. ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձությամբ կիրառվելու հարցին, հեղինակը ճիշտ է նկատում, որ 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան ոչ թե միջազգային իրավական նորմեր էր **սահմանում**, այլ ընդամենը **կողիֆիկացնում**, մեկ փաստաթղթում ամբողջականացնում էր միջազգային սովորության իրավունքի նախկինում եղած սկզբունքները: Այս իրողությունը փաստարկելու համար բերվում է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 1969 թ. դիտարկումը, որի համաձայն 1948 թ. կոնվենցիայով ցեղասպանության հանցագործության կողիֆիկացումը ո՛չ ընդլայնել, ո՛չ էլ նեղացրել է այդ հանցագործությունը, այլ ընդամենը ավելի ճշգրիտ ձևով է սահմանել այն<sup>36</sup>:

Ցեղասպանության հանցագործության սահմանման և հանցակազմի հետ կապված հիմնահարցերի ներկայացումից հետո Դաքեայանի կողմից վեր են հանվում հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության մեջ առկա այդ հանցագործության բաղադրիչները: Պատմական փաստերի հիման վրա ցույց է տրվում, որ «ցեղասպանություն» եզրույթի բացակայության պայմաններում Փարիզի խաղաղության վեհաժողովի «Պատերազմ սանձազերծելու պատասխանատվության ու պատիժների իրականացման» կամ այսպես կոչված «Տասնհինգի հանձնաժողովի» 1919 թ. մարտի 5-ին ընդունած առաջին զեկույցում նման գործողությունները որակվել են որպես «մարդկության օրենքների դեմ գործած հանցագործություններ»: Հեղինակը եզրակացնում է, որ այդ որակման հիմքում ընկած է 1899 թ. և 1907 թ. Հաագայի կոնվենցիաներում տեղ գտած «Մարտենսի վերապահումը»<sup>37</sup>: Նշենք, որ այդ զեկույցի հիմքում, «Մարտենսի վերապահումից» բացի, ընկած էր մեկ այլ կարևոր փաստաթուղթ՝ հայերի զանգվածային սպանությունների կատարման պահին ընդունված 1915 թ. մայիսի 24-ի հռչակագիրը, որով Անտանտի տերությունները թուրքական պետությանը սպառնում էին պատերազմի ավարտից հետո պատժել մարդկության դեմ հանցագործություն կատարողներին: «Տասնհինգի հանձնաժողովը», որում ընդգրկված էին նաև Անտանտի տերությունների ներկայացուցիչները, կատարում էր այդ խոստումը: Այնպես է, որ հեղինակը «Մարտենսի վերապահումից» մինչև Խաղաղության վեհաժողով ու Սևրի պայմանագրի 230-րդ հոդված ընկած շղթայում բաց է թողել 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրի կարևոր օղակը: Կարծում ենք, որ դա տեղի չէր ունենա, եթե այդ կարևոր փաստաթուղթը հեղինակի կողմից ավելի պատշաճ ուշադրության արժանանար:

Ցեղասպանության հանցակազմի դիտավորության հանգամանքի հիմնավորման հարցում հեղինակը հրաժարվում է հիմք ընդունել Ա. Անտոնյանի հրապարակած փաստաթղթերը՝ այն պատճառաբանությամբ, որ դրանք կասկածի տակ են դրվում թուրք հետազոտողների կողմից<sup>38</sup>: Ցեղասպանության հանցագործության միտումը հեղինակը փորձում է հիմնավորել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի ժողովի որոշմամբ: Խոսքը ոչ թե 1911 թ. Սալոնիկի, այլ 1915 թ. հունվարին հրավիրված գաղտնի ժողովի մասին է, որի ժամանակ ընդունվել է տասը կետերից բաղկացած Հայոց ցեղասպանության իրագործման ծրագիրը, ինչը շրջաբերական նամակի տեսքով ուղարկվել է վալիներին, իսկ հետագայում հայտնվել բրիտանական արխիվում<sup>39</sup>: Եթե առաջնորդվենք թուրքերի կողմից փաստերն ու փաստաթղթերը կասկածի տակ դնելու հնարավորությամբ, ապա այս փաստաթուղթը նույնպես կարող է համարվել ոչ արժանահավատ, քա-

35 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, էջ 132:

36 Տե՛ս Ռ. Դաքեայան, նշվ. աշխ., էջ 72:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 101:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 131:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 132-133:

նի որ այն հայտնաբերվել է Օսմանյան կայսրության դեմ պատերազմող դաշինքի կազմում գտնվող Անգլիայի արխիվներում՝ անկախ այն բանից, որ բրիտանական իշխանություններն այդ փաստաթուղթը ձեռք են բերել թուրքական հետախուզության նախկին ղեկավար Ահմեդ Էսադի միջոցով<sup>40</sup>: Սա նշանակում է, որ հեղինակի կողմից չպետք է անտեսվեին այն փաստերն ու փաստաթղթերը, որոնք սուբյեկտիվ մոտեցումներով կարող են մերժվել թուրքերի կողմից, պարզապես նա պետք է դրանք վերահաստատեր թուրքական ռազմական տրիբունալների՝ երիտթուրքերի դատավարության մեղադրական եզրակացություններով ու դատավճիռներով, որոնց կասկածի տակ դնեն արդեն անլուրջ կհամարվի: Դրանցում առկա են փաստեր ու փաստաթղթեր, որոնք անուղակիորեն վերահաստատում են այդ թվում՝ Անտոնյանի հրատարակած փաստաթղթերի իսկությունը<sup>41</sup>:

Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայում ամրագրված այդ հանցագործության հանցակազմի հատկանիշները Հայոց ցեղասպանության փաստի վրա տեղայնացնելով՝ հեղինակը նշում է, որ թուրքական իշխանությունները դիտավորություն են ունեցել բնաջնջելու Օսմանյան կայսրության հայերին, այլ ոչ թե ամբողջ հայ ժողովրդին և որ հայերի բնաջնջումը համընդհանուր բնույթ չունի<sup>42</sup>: Այս դատողությունը չի դիմանում քննադատության, քանզի հայտնի է, որ 1914-1915 թթ. թուրքական բանակի ստորաբաժանումները, ներխուժելով Պարսկաստանի տարածքներ, այնտեղ իրականացրին Ատրպատականի հայության կոտորածները, իսկ 1918 թ. ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայման պատճառով թուրքերը ներխուժեցին նաև Արևելյան Հայաստան ու կազմակերպեցին Շիրակի, Լոռվա ու Ախալքալաքի շրջանների հայության կոտորածները, հետագայում էլ ազերի մուսավաթականների հետ իրականացրին Նուխիի, Արեշի ու Բաքվի հայության ջարդերը: Այս փաստերը վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունները մտադրություն ունեին բնաջնջելու ոչ միայն Օսմանյան կայսրության հայերին, այլև ողջ հայությանը, պարզապես ռուսական կովկասյան բանակի հաջողությունները թուրքերին հնարավորություն չտվեցին Առաջին աշխարհամարտի սկզբին ներխուժել Անդրկովկաս: Ի վերջո, չպետք է մոռանալ պանթուրքիզմի գաղափարախոսության մասին, որով առաջնորդվում էին երիտթուրքերը: Ինչպես հայտնի է, այդ գաղափարախոսության համաձայն՝ պետք է ստեղծվեր Մեծ Թուրան համաթուրքական պետությունը, Օսմանյան կայսրությանը պետք է միացվեին այն տարածքները, որտեղ բնակվում էին թուրքախոս ցեղերը՝ Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասը, Ուրալը, Պոլովոյեն, Միջին Ասիան, Ալթայը: Ինքնին հասկանալի է, որ այդ պետության մեջ ոչ թուրք ժողովուրդները և առաջին հերթին՝ հայերը, տեղ չունեին և պետք է ոչնչանային: Այս փաստերի շարադրման պարագայում այլևս կարիք չէր լինի արդարանալու, թե քանի որ դիտավորությունն ուղղված էր հայերի էական մասի վերացմանը, ուստի դա չի խանգարում նրանց հետ կատարվածը ցեղասպանություն որակելուն<sup>43</sup>:

Այնուհետև աշխատանքում անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, ներկայացվում են միջազգային կառավարական կազմակերպությունների ու պետությունների կողմից ընդունված բանաձևերը: Մեջբերելով Եվրոխորհրդարանի 1987 թ. հունիսի 18-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի կետերը՝ կարծիք է հայտնվում, թե այն գերծ է երկինաստություններից<sup>44</sup>: Ստիպված ենք կրկին չհամաձայնել հեղինակի հետ, քանզի դեռևս բանաձևի նախապատրաստական փաստաթղթերում էին առկա երկինաստություններ ու հակասական տեսակետներ, որոնք արտացոլ-

40 Տե՛ս նույն տեղում, էջ 133:

41 Տե՛ս **Մարտյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 146-166:

42 Տե՛ս **Դաբեյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 135-136:

43 Տե՛ս **Դաբեյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 136:

44 Տե՛ս նույն տեղում, էջ 142:

վեցին նաև բանաձևի տեքստում: Եվրախորհրդարանի կողմից ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևում մի կողմից՝ արձանագրվում է, որ Հայոց ցեղասպանությունը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի սահմանումներին, սակայն մյուս կողմից՝ նշվում է, որ ժամանակակից Թուրքիան չի կարող պատասխանատու համարվել այդ հանցագործության համար<sup>45</sup>: Նման հակասական կարծիքներով հնարավոր է ստեղծել մի իրավիճակ, երբ թուրքական կողմը կարող է հանգել այն արքայազնի եզրահանգմանը, որ անգամ Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն իր համար չի կարող իրավական հետևանքներ ունենալ<sup>46</sup>:

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է Թուրքիայի Հանրապետության և Օսմանյան կայսրության իրավասուբյեկտության հարցի քննությանը: Միջազգային դատական պրակտիկայի օրինակներով հեղինակը ցույց է տալիս, որ միշտ չէ, որ դատական ատյանները պատասխանատվության են ենթարկում իրավահաջորդ պետությանը՝ նրա իրավանախորդի կատարած իրավախախտումների համար: Իսկ այն դեպքերում, երբ իրավահաջորդ պետությունը պատասխանատու է ճանաչվում դատական ատյանի որոշմամբ, ապա դա ոչ թե նախորդ պետությունից «ժառանգություն ստացած», այլ իրավահաջորդի պատասխանատվությունն է, որը շարունակել է իրավանախորդի իրավախախտումը<sup>47</sup>: Հատկանշական է, որ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ Թուրքիայի պարագայում տեղին չէ «Օսմանյան կայսրության իրավահաջորդ» եզրույթի օգտագործումը, այլ պետք է օգտագործել «Օսմանյան կայսրության իրավաշարունակող» եզրույթը, քանի որ նախորդ պետության տարածքում չի առաջացել նոր պետություն, այլ գործ ունենք պետության շարունակության հետ, քանզի անկախ տարածքի ծավալի կամ անվան փոփոխություններից, պետությունը մնացել է նույնը, և Թուրքիան շարունակել է Օսմանյան կայսրության գոյությունը<sup>48</sup>:

Թուրքիայի Օսմանյան կայսրության ոչ թե իրավահաջորդ, այլ իրավաշարունակող լինելու դրույթը ժամանակին առաջ է քաշվել սիյուռքահայ հետազոտող Շ. Թորիկյանի կողմից, որը որպես դրա ապացույց վկայաբերում էր 1925 թ. միջազգային իրավաբար է. Բորելի իրավաբարությունը, որով Թուրքիային հարկադրվեց վճարել Օսմանյան կայսրության նախկին պարտքը<sup>49</sup>: Այս ձևակերպումը կարևոր է նրանով, որ ի տարբերություն իրավահաջորդ պետության միջազգային պատասխանատվության դժվարություններին՝ կապված իրավանախորդի կատարած իրավախախտումների հետ, իրավաշարունակող պետության պարագայում նման խնդիր առհասարակ չի կարող առաջանալ:

Բայց այդ ամենից հետո էլ հեղինակը զարմանալիորեն Թուրքիան անվանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդ<sup>50</sup> և, դրանից ելնելով, հաջորդ բաժնում սկսում է քննարկել Թուրքիայի Հանրապետության՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ պետության պահվածքը 1923 թ. հետո: Անշուշտ, նման հարցադրման դեպքում առանձնակի դժվարություն չկա հիմնավորելու, որ մշակութային եղեռն իրականացնելով, Հայոց ցեղասպանությունը ժխտելով, հայերի իրավունքները խախտելով ու նրանց ունեզրկման քաղաքականությունը շարունակելով, Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն չի վերացրել Օսմանյան կայսրության կատարած հանցագործության հետևանքները, այլ հենց ինքն է շարունակել իրավախախտումներ

45 Տե՛ս European Parliament Resolution on a political solution to the Armenian question. Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

46 **Վարդանյան Վ.**, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարված իրավաբանական վերլուծության մասին, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 8, Եր., 2003, էջ 58:

47 Տե՛ս Դաքեայան Ռ., նշվ. աշխ., էջ 182:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 185:

49 Տե՛ս **Թորիկյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրէնքը, էջ 190-195:

50 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 190:



իրականացնել հայերի նկատմամբ: Սակայն այս դեպքում Թուրքիայի Հանրապետությունը պատասխանատվություն կարող է կրել ոչ թե ցեղասպանության հանցագործության համար, այլ միայն իր կողմից կատարված իրավախախտումների համար, ինչի հետ կարծես թե համակերպվում է հեղինակը:

Գրքի երկրորդ մասում, որը նվիրված է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման դատական և արտադատական եղանակների քննությանը, 1968 թ. կոնվենցիայի դրույթների վրա հենվելով՝ հիմնավորվում է ցեղասպանության հանցագործության պատժի հետ կապված վաղեմության ժամկետ չլինելու իրողությունը<sup>51</sup> և դատական կարգով հարցը լուծելու՝ Հայաստանի Հանրապետության իրավագործությունը, հաշվի առնելով այդ հանցագործության գոհերի հետ նրա էթնիկական, կրոնական, լեզվական և մշակութային կապը և այն, որ ցեղասպանության գոհերի բազմաթիվ ժառանգներ Հայաստանի քաղաքացիներ են<sup>52</sup>: Հայաստանի իրավագործության հարցում հեղինակի բերած փաստարկներին ավելացնենք, որ Հայաստանն իրավասու է հանդես գալու ոչ միայն Հայոց ցեղասպանության այն գոհերի իրավունքների պաշտպանությամբ, որոնց ժառանգներն իր քաղաքացիներ են, այլ նաև այդ հանցագործության գոհ հանդիսացող սփյուռքահայության անունից, քանզի արևմտահայերի լեզիտիմ մարմինը՝ Արևմտահայերի երկրորդ համագումարը, դեռ 1919 թ. փետրվարի 12-ին Հայաստանի առաջին Հանրապետությանը, որի իրավահաջորդն է ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, իր անունից հանդես գալու իրավունքով է օժտել<sup>53</sup>:

Անդրադառնալով ՄԱԿ-ի միջազգային դատարանին դիմելու ընթացակարգերին՝ նշվում է, որ Հայաստանն իբրև ՄԱԿ-ի լիիրավ անդամ հնարավորություն ունի ինչպես Գլխավոր Ասամբլեայի միջոցով խորհրդատվական եզրակացություն խնդրել միջազգային դատարանից, ընդ որում, դրա համար, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 18-րդ հոդվածի, անհրաժեշտ է ձայների ոչ թե երկու երրորդը, այլ պարզ մեծամասնությունը, այնպես էլ ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա առանց Թուրքիայի համաձայնության, իրավունք ունի ՄԱԿ-ի Միջազգային դատարան հայց ներկայացնել վերջինիս դեմ<sup>54</sup>: Սակայն հեղինակը շտապում է դատարան դիմելու հարցում առաջ քաշել «դժվար, եթե ոչ անհնարին խոչընդոտներ» ձևակերպումը՝ նշելով, որ դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելու համար գործը պետք է «այժմեական լինի», իսկ Հայոց ցեղասպանության գործն ինքն այդպիսին չի համարում<sup>55</sup>: Դրանից ելնելով՝ Դաքեայանը պնդում է, որ Թուրքիայի պատասխանատվության և պատժի հարցերը չեն կարող լուծվել դատական կարգով: Որպես այդ խոչընդոտները շրջանցող միջոց նա կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա մի պահ նշմարում է Թուրքիային ոչ թե ցեղասպանություն իրականացնելու, այլ այսօր այդ հանցագործության ժխտումը կազմակերպելու հիմքով դատի տալու հնարավորությունը, սակայն դրա հետ շատ հույսեր չի կապում, քանզի, ըստ հեղինակի, դժվար թե գտնվի մի պետություն, որն այդ հիմքով համաձայնվի դիմել միջազգային դատարան: Նրա կարծիքով, նույնիսկ Հայաստանի շահերից չի բխում նման քայլը, քանի որ սկսվել է Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման գործընթացը<sup>56</sup>:

Զժխտելով Հայոց ցեղասպանության հայցով միջազգային դատարան դիմելու գործում առկա խոչընդոտները, ի տարբերություն Դաքեայանի՝ կարծում ենք, որ դրանք հաղթահարելի են, եթե, դատարանի ընթացակարգերը հաշվի առնելով, Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքները ճիշտ ու ներդաշնակ համակցվեն միջազգային իրավունքի նորմերի, սկզբունքների ու նախադեպային որո-

51 Տե՛ս Դաքեայան Ռ., նշվ. աշխ., 230-245:

52 Տե՛ս նույն տեղում, էջ 257:

53 Տե՛ս Մարտիկյան Ա., նշվ. աշխ., էջ 42-46:

54 Տե՛ս Դաքեայան Ռ., նշվ. աշխ., 275-278:

55 Տե՛ս նույն տեղում, 278-279:

56 Տե՛ս նույն տեղում, էջ 279-280:

շումների հետ և հստակ ձևակերպվեն դրանցից բխող պահանջները<sup>57</sup>: Կարծում ենք, որ Թուրքիան ՄԱԿ-ի միջազգային դատարանում կարող է պատասխանատվության կանչվել ոչ միայն Օսմանյան կայսրության իրավահաջորդ համարվելու դեպքում՝ Հայոց ցեղասպանության ժխտման ու հայկական հուշարձանների նկատմամբ մշակութային եղեն իրականացնելու համար, այլև Օսմանյան կայսրության իրավաշարունակող լինելու փաստի ապացուցման դեպքում՝ հենց Հայոց ցեղասպանության իրականացման համար: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության այժմեականությանը, ապա հեղինակին պետք է հիշեցնենք, որ ի դեմս Հայոց ցեղասպանության գործ ունենք շարունակվող հանցագործության հետ, քանզի այդ հանցագործության չվերացված հետևանքները հայ ժողովուրդը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում շարունակում է կրել իր ուսերին, ինչն ի դեպ ընդունվում է նաև հեղինակի կողմից<sup>58</sup>:

Ժամանակակից են նաև հեղինակի այն դատողությունները, թե՛ անգամ Հայաստանին ձեռնտու չէ Թուրքիայի դեմ հայց ներկայացնելը երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացի սկզբնավորման պատճառով, քանզի Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշման և նախկինում հնչեցրած նախապայմանների վերադառնալու պատճառով այդ գործընթացն արդեն ձախողվել է: Բացի այդ էլ՝ հեղինակը, թերևս, անտեսում է այն փաստը, որ 2015 թ. հունվարի 29-ին ընդունվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հոչակագիրը», որով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարել են, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ<sup>59</sup>:

Քննարկելով Հայոց ցեղասպանության համար հատուցման հարցը և ներկայացնելով միջազգային իրավունքում առկա փոխհատուցման ձևերն ու կարգը, հեղինակը գալիս է այն եզրակացությանը, որ վերադարձը (ռեստիտուցիան) գրեթե անհնարին է և Հայոց ցեղասպանության պարագայում հատուցման ամենաիրականանալի տարբերակ կարող է լինել համարժեքով փոխհատուցումը կամ վնասների փոխհատուցումը (կոմպենսացիան) և բավարարումը (սատիսֆակցիան), այսինքն՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության համար ներողություն խնդրելը<sup>60</sup>:

Այս եզրակացությունը տարօրինակ է առնվազն այն առումով, որ նույն ենթագլխի նախորդ էջերում ներկայացված են միջազգային նախադեպային իրավունքում տեղ գտած վնասի հատուցման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են՝ *pretium doloris* (բարոյական վնասի փոխհատուցումը), *lucrum cessans*-ի (չստացված շահույթի) հաշվառումը, ինչպես նաև կրած վնասների չվճարման պարագայում առաջացած տոկոսների վճարումը<sup>61</sup>: Վերադարձի (ռեստիտուցիայի) կիրառման անհնարինության կապակցությամբ կարող ենք նշել, որ եթե այն հնարավոր չէ կիրառել վնասված կամ ոչնչացված գույքի պարագայում, ապա լիարժեքորեն կիրառելի է անհատների, համայնքային ու եկեղեցապատկան սեփականություն հանդիսացող հողի և չվնասված

57 Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Եր., 2014, էջ 94-151:

58 Տե՛ս **Դաբեսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 257, 303:

59 Տե՛ս <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>

60 Տե՛ս **Դաբեսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 312, 314:

61 Տե՛ս նույն տեղում, էջ 311:

կալվածքների նկատմամբ:

Թուրքական դատարաններում հայերի բռնազավթված անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների վերականգնման ուղղությամբ նրանց ժառանգների կողմից արդեն որոշ քայլեր կատարվել են: Բացի այդ՝ արձանագրվել է առաջին դեպքը, երբ նման նախաձեռնությամբ հանդես է եկել հայ ժողովրդի ազգային կառույցն ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական այթոռներից մեկի՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության<sup>62</sup>: Ինչպես հայտնի է, 2015 թ. ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն Սսի կաթողիկոսության կալվածքների նկատմամբ իրավունքների վերականգնման պահանջով դատական գործընթաց նախաձեռնեց Թուրքիայում՝ դիմելով այդ երկրի Սահմանադրական դատարան<sup>63</sup>: Իսկ բռնազավթված հայրենիքի համենայն դեպս մի մասի նկատմամբ վերադարձի (ռեստիտուցիայի) կիրառումը կարող է իրականացվել 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հիման վրա, որը ոչ միայն վերլուծության չի ենթարկվել հեղինակի կողմից, այլև ընդհանրապես չի արժանացել նրա ուշադրությանը:

Հայոց ցեղասպանության հարցը դատական կարգով լուծելն անհնարին համարելով, Դաքեայանն առաջարկում է ապավինել հարցի լուծման արտադատական կարգավորման եղանակներին: Որպես նման եղանակներ հեղինակի կողմից առաջարկվում են՝ երրորդ պետության միջնորդությամբ Հայաստանի և Թուրքիայի միջև տարաձայնությունների հաղթահարումը, միջազգային հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը, ուղիղ երկկողմ բանակցություններն ու դրան օժանդակող միջոց հանդիսացող միջազգային հետաքննությունը և միջազգային կազմակերպությունների միջոցով հարցի կարգավորումը: Հեղինակի առաջարկված տարբերակների անարդյունավետության և նույնիսկ վնասակարության պտուղները հայ ժողովուրդն արդեն հասցրել է ձաշակել: Ինչպես արդեն նշել ենք, Շվեյցարիայի միջնորդությունը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու փորձը տապալվեց վերջինիս ապակառուցողական դիրքորոշման պատճառով: Ավելին, բանակցություններն ու ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումը ոչ միայն բացասական ազդեցություն ունեցան Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա, այլև ուղղակի արգելակեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը. որոշ երկրների խորհրդարանների օրակարգից հարցը պարզապես հանվեց այն պատճառաբանությամբ, որ չեն ցանկանում խանգարել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին:

Միջնորդության մյուս անհաջող օրինակը կապված է Թուրքիայի կրտսեր եղբոր՝ Ադրբեյջանի հետ, որն արգելակում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելության գործունեությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ: Բացի այդ՝ չպետք է մոռանալ, որ միջնորդները, որպես կանոն, առաջնորդվում են իրենց շահերով՝ հաճախ ձգտելով ոչ թե վեճը կարգավորել, այլ իրենց ազդեցությունը հաստատել վեճի կողմերի վրա, ինչի արդյունքում կարգավորման գործընթացը կարող է ձգվել տարիներով և նույնիսկ տասնամյակներով:

Հաշտեցման հանձնաժողովի հետ կապված նույնպես արդեն ունեցել ենք տխուր փորձառություն, որը կապված էր տխրահռչակ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության հետ: 2001 թ. հուլիսի 10-ին ստեղծված և մինչև 2003 թ. ամառ գործունեություն ծավալած այս ոչ պաշտոնական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել էին 6 թուրք և 4 հայ նախկին պաշտոնյաներ ու քաղաքական գործիչներ, իր նպատակն էր հռչակել երկխոսություն սկսել թուրքերի ու հայերի միջև և նախանշել երկու ժողովուրդների հաշտեցման հնարավորություն-

62 Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015, էջ 103:

63 Տե՛ս Հարցազրույց Ն.Ս.Օ.Տ.Տ, Վեհափառ Հայրապետին հետ Սսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջքին մասին, «Հասկ», Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտոնական ամսագիր, N 4, Ալաթիլիաս, 2015, էջ 243-248:

ները: Պաշտոնապետ այս հանձնաժողովի ստեղծման ու գործունեության իրակա-նացումը ստանձնել էր Վիեննայի դիվանագիտական ակադեմիան, սակայն հետա-գայում պարզվեց, որ հանձնաժողովի գործունեությունն ուղղորդվում է ԱՄՆ Պետ-քարտուղարության կողմից<sup>64</sup>: Թեև հայտարարվել էր, որ հանձնաժողովում Հայոց ցեղասպանության հարցը չի քննարկվելու, այդուհանդերձ, հենց այդ հարցը դարձավ քննարկման գլխավոր առարկան, որի շուրջ առաջացած հակադիր մոտեցումների պատճառով էլ այն երկու տարի անց դադարեցրեց իր գործունեությունը<sup>65</sup>:

Որպես հարցի արտադատական լուծման եղանակ ներկայացվում է նաև երկ-կողմ բանակցային գործընթացը լրացնող միջոց հանդիսացող միջազգային հե-տաքննությունը, երբ կողմերի հատուկ համաձայնությամբ ձևավորվում է հետա-քննիչ հանձնաժողով, որը վեճի առարկայի վերաբերյալ զեկույց է պատրաստում ու ներկայացնում վեճի կողմերին<sup>66</sup>: Այս տարբերակի համար Դաքեայանը բարե-նպաստ պայման է համարում ցյուրիխյան արձանագրության մեջ նշված պատմա-կան հարցերի քննարկման միջկառավարական հանձնաժողովի ստեղծման դրույ-թը՝ ափսոսանք հայտնելով, որ արձանագրությունը չվավերացվեց և նշված ենթա-հանձնաժողովը նույնիսկ չսկսեց «հայկական հարցի վերաբերյալ հետաքննության աշխատանքները»<sup>67</sup>: Տեղեկացնենք հեղինակին, որ արձանագրություններում տեղ գտած այդ կետը թուրքական իշխանությունների կողմից անընդհատ առաջարկ-վող և հայկական կողմից անընդհատ մերժվող «պատմաբանների հանձնաժողովի» գաղափարի ձևավոխված տարբերակի ամրագրումն է: Այդ առաջարկով թուրքա-կան կողմը մշտապես ձգտել է Հայոց ցեղասպանության հարցը վերածել զուտ պատմական հարցի, որպեսզի հայ և թուրք պատմաբաններն անվերջ վիճեն՝ եղև է, թե ոչ Հայոց ցեղասպանությունը, և արդյո՞ք կատարվածը ցեղասպանություն էր, ինչը թուրքական պետությանը գերծ կպահի այդ հանցագործության համար պա-տասխանատվությունից: Բնական է, որ հայկական կողմը մերժում է թուրքական այդ ծուղակը՝ մշտապես շեշտելով, որ Հայոց ցեղասպանությունը հաստատված պատմական փաստ է և քննարկման ենթակա չէ: Ավելացնենք, որ հեղինակի առաջարկած միջազգային հետաքննության տխուր փորձը նախկինում նույնպես ունեցել ենք ի դեմս Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի կողմից հրապարակված զեկույցի, որին նման խնդրանքով դիմել էր վերը նշված Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը: 2003 թ. փետրվարի 10-ին ԱՄՆ-ում գործող այդ կենտրոնը հրապարակեց իր զեկույցը, որով դրա հեղինակները կարծիք էին հայտնում, որ ցեղասպանության եզրույթը այնպես, ինչպես այն կի-րառվել է ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում, համապատասխանում է XX դարասկզբին հայերի հետ տեղի ունեցած իրադարձություններին, սակայն միևնույն ժամանակ նշվում էր, որ 1951 թ. հունվարի 12-ին ուժի մեջ մտած ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանույթ-յան մասին կոնվենցիան չի կարող հետադարձությամբ կիրառվել մինչ այդ տեղի ունեցած դեպքերի, այսինքն՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ<sup>68</sup>: Ակնհայտ է, որ դա «անկախ» փորձագիտական կենտրոնի կողմից ընդունված փոխզիջումային մի կարծիք էր, որի նպատակը ամենևին էլ հարցի վերաբերյալ ճշգրիտ իրավական վերլուծություն կատարելը չէր, այլ վեճի կողմերին հաշտեցնելու գործընթացի մեջ պահելը:

Հարցի արտադատական լուծման՝ Դաքեայանի կողմից ներկայացրած այս տարբերակների վերլուծությունը պարզորոշ ցույց է տալիս, որ հեղինակն առն-

64 Տե՛ս **Անանյան Ա.**, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ: Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին, Եր., 2003, էջ 142:

65 Տե՛ս նույն տեղում, էջ 148:

66 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 346:

67 Տե՛ս նույն տեղում, էջ 347:

68 Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարված իրավաբանական վերլուծության մասին, էջ 50:

վազն անտեղյակ է, որ դրանք նախկինում արդեն փորձարկվել ու ձախողվել են: Իսկ այդ մասին իմանալով հանդերձ դրանք ներկայացնելու տարբերակը չենք քննարկում, դա թողնելով նրա՝ որպես հայ հետազոտողի, խղճին:

Ներկայացվածից, թերևս, ընդունելի է միայն միջազգային կառույցների շրջանակներում, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում և ՄԱԿ-ի ենթակառույցներում Հայոց ցեղասպանության հարցի ավելի արդյունավետ բարձրացումը, հաշվի առնելով, որ այդ կառույցում Հայաստանն արդեն արձանագրել է որոշ հաջողություններ:

1998 թ. դեկտեմբերի 2-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժելիության կոնվենցիայի 50-ամյակի մասին» Հայաստանի և հինգ այլ երկրների ներկայացրած ցեղասպանության դատապարտման 53/43 բանաձևը, որում երախտագիտություն էր հայտնվում բոլոր այն երկրներին, որոնք վավերացրել էին Կոնվենցիան, առաջարկվում էր միանալ կոնվենցիային այն երկրներին, որոնք դեռ չէին արել դա: Կոչ էր արվում բոլոր երկրներին ընդլայնել և ակտիվացնել ջանքերը նրա դրույթների կատարման ուղղությամբ, ինչպես նաև իրականացնել դրանց կատարման ուսումնասիրումը, վեր հանել խոչընդոտներն ու նախանշել հաղթահարման ուղիները՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում<sup>69</sup>: 2015 թ. սեպտեմբերի 11-ին էլ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիագումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղասպանության հանցագործության գոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր<sup>70</sup>:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայից բացի՝ Հայաստանը կարող է փորձել նախաձեռնություններով հանդես գալ նաև Մարդու իրավունքների խորհրդում՝ նախկին Մարդու իրավունքների հանձնաժողովում, որտեղ երկու անգամ՝ 1974 թ. մարտի 6-ին ռուսալեզու Ռուսալեզուների ղեկավարի 30-րդ պարբերության<sup>71</sup> և 1985 թ. հունիսի 2-ի անգլիացի Բ. Ուայթթերի ղեկավարի 24-րդ պարբերության<sup>72</sup> մեջ Հայոց ցեղասպանության մասին հիշատակումներ էին պարունակվում: ՅՈՒՆԵՍԿՕ-ում էլ Հայաստանի կողմից կարող են քայլեր ձեռնարկվել Արևմտյան Հայաստանի պատմամշակութային հուշարձանների պաշտպանության առումով:

Ընդունելի է նաև 1966 թ. դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի հոդվածներով ձևավորված ՄԱԿ-ի հովանու տակ գործող Մարդու իրավունքների կոմիտեում Հայաստանի կողմից գործունեության ծավալելու, ինչպես նաև տարածաշրջանային միջազգային կազմակերպություններում, մասնավորապես՝ Եվրամիությունում և եվրոպական մյուս կառույցներում գործունեությունն ակտիվացնելու հեղինակի առաջարկը, որտեղ նույնպես որոշակի հաջողություններ արդեն գրանցվել են և այժմ էլ կան դրանք զարգացնելու նախադրյալները: Սակայն, նշված միջազգային կառույցներում Հայաստանի կողմից ձեռնարկվելիք ապագա քայլերը պետք է դիտվեն ոչ թե որպես այլընտրանք՝ միջազգային դատարանում Թուրքիայի դեմ գործ նախաձեռնելուն, ինչպես կարծում է Դաբեյանը, այլ այդ գործողություններն ընդամենը պետք է օժանդակ միջոց դառնան Հայաստանի կողմից դատական գործընթացը նախապատրաստելու համար: Թուրքիայի ներկա պահվածքը խոսում է այն մասին, որ նա Հայոց ցեղասպանության հարցում զիջումների կզնա միայն հարկադրված լինելու դեպքում:

69 Տե՛ս zakon2.rada.gov.ua/laws/show/995\_633

70 Տե՛ս <http://civilnet.am/2015/09/12/un-general-assembly-adopts-armenia-resolution-on-genocide/#.Vhl7vm6den8>

71 Տե՛ս Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.), կազմող և առաջարանի հեղինակ **Լ. Ա. Բարսեղյան**, Եր., 1998, էջ 5:

72 Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 665-666.

Միջազգային իրավունքում հարկադրանքի օրինական հիմք է համարվում միջազգային դատական ատյանի ուժի մեջ մտած որոշումը, որը, ՄԱԿ-ի կանոնադրության 94-րդ հոդվածի համաձայն, պարտադիր է այն պետությունների համար, որոնք հանդիսանում են տվյալ գործով կողմեր<sup>73</sup>: ՄԱԿ-ի կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, եթե կողմերից մեկը չի կատարում Դատարանի որոշումը, ապա ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը մյուս կողմի խնդրանքով կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել որոշումն ի կատար ածելու նպատակով<sup>74</sup>: Իրավախախտ պետության հրաժարումը՝ կատարել միջազգային դատարանի որոշումը, կարող է որակվել որպես կրկնահանգանք, որը միաժամանակ հակադրվում է պատասխանատվության սկզբունքին<sup>75</sup>: Պետության կողմից նման հրաժարումը պետք է դիտել որպես ծանրացուցիչ հանգամանք, ինչը հիմք է հանդիսանում նրա նկատմամբ միջազգային իրավական պատժամիջոցների կիրառման համար<sup>76</sup>:

Անշուշտ, կիսում ենք միջազգային դատարանների կողմից երբեմն նկատվող սուբյեկտիվ դիրքորոշումների վերաբերյալ հեղինակի մտավախությունները, սակայն դա չպետք է հանգեցնի դատական գործընթացի առհասարակ հրաժարման և այդ հարցում մեր անգորության ընդունման: Դա նշանակում է, որ մի կողմից պետք է պատրաստել Հայոց ցեղասպանության գործով հայցը, որը պետք է անթերի ու անխոցելի լինի միջազգային իրավունքի ու նորմերի տեսակետից: Մյուս կողմից էլ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններն ու Սփյուռքի լոբբիստական կառույցները ներդաշնակ ու համաձայնեցված գործունեությամբ պետք է փորձեն համաշխարհային քաղաքականության ազդեցիկ կենտրոններում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, ԵՄ-ում և Ռուսաստանում, Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ ձևավորել այնպիսի տրամադրվածություն, որ նրանք, եթե նույնիսկ հենց իրենք այդ հարցով անմիջական ճնշում չգործադրեն Թուրքիայի վրա, ապա սատարեն Հայաստանի ջանքերին, երբ վերջինս պատրաստ կլինի միջազգային դատական ատյանում իրավական գործընթաց նախաձեռնել Թուրքիայի դեմ՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով<sup>77</sup>:

Որպես հիմնահարցի արտադատական կարգավորման եղանակ հեղինակի կողմից նշվում են նաև ուղիղ երկկողմ բանակցությունները: Առնվազն տարօրինակ է այս տարբերակի քննարկումը, քանզի հենց Դաքեայանն ինքն է նշում, որ Թուրքիան Հայաստանի անկախությունը ճանաչելուց հետո մշտապես նախապայմաններ է առաջ քաշել՝ նրա հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար<sup>78</sup>:

Որպես Ցյուրիխյան արձանագրությունների տապալման հիմնական պատճառ հեղինակի կողմից նշվում է Լեռնային Դարաբաղի հարցի վերաբերյալ Հայաստանի և Թուրքիայի միջև տարաձայնությունը: Բայց չզիտես ինչու առաջարկվում է, որ կողմերը վերսկսեն բանակցությունները, փորձեն դրանց միջոցով կարգավորել այդ հիմնական խնդիրը<sup>79</sup>: Կարծում ենք, որ այս առաջարկը շատ կուրախացնի Ադրբեջանին և Թուրքիային, որոնք տասնամյակներ շարունակ պայքարում են Անկարային Դարաբաղյան կարգավորման գործընթացի մասնակից և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի դարձնելու համար: Ավելին, այս վնասակար պնդումից ելնելով՝

73 Տե՛ս Международное право, отв. редакторы Г.В. Игнатенко, О.И. Глунов, М., 2009, с. 428.

74 Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, Եր., 2005, էջ 50-51:

75 Տե՛ս **Василенко В.А.**, Ответственность государства за международные правонарушения, Киев, 1976, с. 77.

76 Տե՛ս նույն տեղում, էջ 56:

77 Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015, էջ 204-205:

78 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 359:

79 Տե՛ս նույն տեղում, էջ 343:

հեղինակը, շեղվում է բուն նյութից, անհարկի ձևով առանձին ենթագլուխ է նվիրում Լեռնային Ղարաբաղի հարցին և դրա ազդեցությանը թուրք-հայկական հարաբերությունների վրա<sup>80</sup>:

Լեղինակը հատուկ ենթագլուխ է առանձնացրել Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների հնարավոր կարգավորման առավելությունները ներկայացնելու համար: Այն, որ Թուրքիան առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը 1991 թ. դեկտեմբերի 16-ին, դիտվում է որպես դրական քայլ՝ հարաբերությունների զարգացման համար<sup>81</sup>, մինչդեռ այդ քայլը պայմանավորված էր ոչ թե Հայաստանի հետ հետագա հարաբերությունների զարգացման, այլ Հայաստանը հենց եղած սահմաններում ճանաչելու ձգտումով, որպեսզի այդպիսով բացառվի բռնազավթված տարածքների՝ Հայաստանին վերադարձի հարցը: Ի դեպ, նույնը տեղի ունեցավ նաև 1918 թ. հունիսի 4-ին, երբ Բաթումի պայմանագրով թուրքական պետությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը շուրջ 12000 կմ<sup>2</sup> տարածքում՝ այդ կերպ ամրագրելով հայկական տարածքների իր կողմից բռնազավթումը<sup>82</sup>:

Դաքեայանը վարդազույն երանգներով է ներկայացնում հայ-թուրքական սահմանի բացման հեռանկարը՝ հաշվի չառնելով ժողովրդագրական, տնտեսական և ազգային անվտանգության հետ կապված մարտահրավերները, որոնց դիմագրավելու հնարավորություն Հայաստանը դեռևս չունի: Ավելին՝ հեղինակը չի պատասխանում այն հարցին, թե ինչ գին պետք է Հայաստանը վճարի սահմանի բացման դիմաց, քանի որ հենց ինքն է ընդունում, որ այդ հարցն Անկարայի համար կորցրել է նախկին հրատապությունը<sup>83</sup>:

Բայց, ըստ էության, պատասխանը տրվում է, Դաքեայանի կողմից առաջարկվող՝ Հայոց ցեղասպանության հարցի արտադատական լուծման տարբերակով, որն արտահայտվում է հետևյալ պարզունակ սխեմայով՝ «Ճանաչում Թուրքիայի կողմից և ներում Հայաստանի կողմից», դա համարելով իր անձնական ներդրումը հարցի լուծման գործում<sup>84</sup>: Հարցի «լուծման» նման «բանաձևով» հեղինակը փաստորեն հետ է կանգնում աշխատության նախորդ գլուխներում իր կողմից նշված վնասի հատուցման (կոմպենսացիայի) գաղափարից՝ թողնելով միայն բավարարումը (սատիսֆակցիան): Իր այդ տեսակետը հիմնավորելու համար հեղինակը բերում է տարբեր երկրների, այդ թվում՝ Իսրայելի և Գերմանիայի օրինակը<sup>85</sup>, որը սակայն հակասում է նրա բերած «լուծման» բանաձևին, քանզի, ինչպես հայտնի է, Իսրայելը և ողջ հրեա ժողովուրդը Գերմանիայից ստացել են ոչ միայն սատիսֆակցիան, այլև կոմպենսացիան:

Ընդ որում հեղինակը կոնկրետ ձևակերպումներ է առաջարկում թե՛ ճանաչման և թե՛ ներման «բանաձևերի» համար: Նա առաջարկում է, որ Թուրքիայի կողմից ընդունված ճանաչման բանաձևում ընդգծվի, որ հանցագործությունները կատարվել են ոչ թե այժմյան Թուրքիայի, այլև Օսմանյան կայսրության կողմից<sup>86</sup>: Այս կերպ նա թերևս վերջնականապես ցանկանում է ներկայիս Թուրքիային ազատել Օսմանյան կայսրության իրավաշարունակողը լինելուց և դրանից բխող պատասխանատվությունից: Այնուհետև հեղինակը պնդում է, որ ճանաչման բանաձևում պետք է հատուկ նշվի, որ հանցագործությունները կատարվել են Օսմանյան կայսրության քաղաքացիների՝ օսմանյան հայերի հանդեպ<sup>87</sup>: Այս դրույթով էլ փորձ է կատարվում նե-

80 Տե՛ս նույն տեղում, էջ 359-367:

81 Տե՛ս նույն տեղում, էջ 367:

82 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), Եր., 1972, էջ 531-537:

83 Տե՛ս **Դաքեայան Ռ.**, նշվ. աշխ., էջ 370:

84 Տե՛ս նույն տեղում, էջ 372:

85 Տե՛ս նույն տեղում, էջ 374:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 376:

87 Տե՛ս նույն տեղում, էջ 376:

դացնել Հայոց ցեղասպանության հանցագործության մասշտաբները, չեղարկելով թուրքերի՝ ամբողջ հայ ժողովրդին ոչնչացնելու մտադրությունը և այն կենտրոնացնելով միայն օսմանյան հայերի վրա:

Հեղինակի կողմից իսպառ անտեսվում է նաև այն փաստը, որ Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը եղել է շարունակական և այն ժառանգվել է նաև իշխանության եկած քեմալականների կողմից, որոնք 1921 թ. շարունակեցին ցեղասպանությունը կիլիկիահայության, իսկ 1922 թ. Զմյուռնիայի հայ և հույն բնակչության նկատմամբ:

Դաքեայանի «առաջարկը» թերևս կարելի է համարել յուրատեսակ մի արձագանք 2008 թ. դեկտեմբերի 15-ի մի խումբ թուրք մտավորականների «Կոչ ներումի»-ին, որում թուրքերը, դիմելով հայերին, ասում էին. «Ժամ խիղճը չի ընդունում անտարբերությունն ու ուրացումը հանդեպ Մեծ եղեռնի, որին ենթարկվեցին օսմանյան հայերը 1915 թվականին: Ես մերժում եմ այս անարդարությունը, կիսում եմ իմ հայ քույրերի ու եղբայրների զգացմունքներն ու ցավերը և ներողություն եմ խնդրում նրանցից»<sup>88</sup>: Միանգամից աչքի է ընկնում, որ թուրք մտավորականներն օգտագործում են «Մեծ եղեռն» եզրույթը, ինչը թերևս կարելի է պատճառաբանել նրանով, որ այդպես են ձևակերպել, քանի որ կոչն ուղղված է հայերին, սակայն այս կոչը հիշեցնում ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբամայի 2009 թ. ապրիլի 24-ի ուղերձը, որը, չնայած իր տված նախընտրական խոստումներին, դիմելով ամերիկահայերին Հայոց ցեղասպանությունը նույնպես «Մեծ եղեռն» անվանեց<sup>89</sup>: Ակնհայտ է, որ երկու դեպքում էլ գործունենք միջազգայնորեն ընդունված «գենոցիդ» եզրույթն օգտագործելուց խուսափելու փաստի հետ, որն, ի տարբերություն «Մեծ եղեռնի», միջազգային իրավունքով սահմանված է որպես քրեական պատասխանատվություն ենթադրող ծանր միջազգային հանցագործություն:

Թուրք մտավորականների ավելի վաղ հնչեցրած կոչի և հետագայում Դաքեայանի կողմից արված «առաջարկի» համեմատության արդյունքում ակնհայտ երևում է սկզբունքային հարցերում դրանց նույնականությունը, ինչը հիմք է տալիս կարծելու, որ հայ հետազոտողի «առաջարկը» թերևս կատարվել է թուրք մտավորականների կոչի ազդեցության տակ: Թե՛ թուրք մտավորականները և թե՛ Դաքեայանը հատուկ շեշտադրում են, որ հանցագործության զոհ են հանդիսանում բացառապես օսմանյան հայերը, այլ ոչ թե հայ ժողովուրդը, և որ հանցագործության կատարման ժամկետը սահմանափակվում է 1915 թվականով<sup>90</sup>: Նման ձևակերպումներով էապես աղավաղվում է Հայոց ցեղասպանության բնույթը և նսեմացվում է հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցագործության ծանրության աստիճանը: Հարկ ենք համարում նշել, որ թուրք մտավորականների «խիղճը չի ընդունում», և նրանք «անարդարություն» են համարում միայն 1915 թ. դեպքերի նկատմամբ «անտարբերությունն ու ուրացումը»՝ բացարձակապես ոչ մի խոսք չասելով այդ հանցագործության հետևանքների հաղթահարման կամ հատուցման մասին:

Եթե Դաքեայանը թուրք մտավորականության ներողության ազդեցության տակ է հետ կանգնել իր աշխատության նախորդ գլուխներում Հայոց ցեղասպանության հարցը դատական կարգով լուծելու հիմնավորումներից, կամ հատուցման ձևերի ու հնարավորությունների դիտարկումներից, ապա ստիպված ենք նրան հիասթափեցնել: Հեղինակը, անշուշտ, քաջատեղյակ է, որ Թուրքիայի քրեական օրենսգրքի տխրահռչակ 301 հոդվածով (որը վերափոխվեց 305-րդ հոդվածի) «թուրք ազգի հիմնական շահին հակառակ գործողությունների» համար, ինչի տակ հասկացվում է նաև այն պնդումը, թե «հայերը ցեղասպանության զոհ են դարձել Առաջին հա-

88 Արթուր 2., Կոչ ներումի. Թուրքերը դիմում են հայերին, Եր., 2011, էջ 9:

89 Sisi The White House, Office of the Press Secretary, April 24, 2009, Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, [http://www.whitehouse.gov/the\\_press\\_office/](http://www.whitehouse.gov/the_press_office/)

90 Տես Արթուր 2., Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, էջ 9: Հմմտ. Դաքեայան Բ., նշվ. աշխ., էջ 372, 376:



մաշխարհային պատերազմի ժամանակ և հետո», նախատեսված է ազատագրվում<sup>91</sup>: Ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ ի տարբերություն «Ակոս»-ի լուսահոգի խմբագիր Հրանտ Դինքի, Նոբելյան մրցանակակիր, թուրք գրող Օրհան Փամուկի և թուրք հրապարակախոս, հրատարակիչ Ռադրբ Զարաբուլուի, որոնք նույնպես Թուրքիայում հրապարակայնորեն խոսում էին Հայոց ցեղասպանության մասին, «ներողության արշավի» մասնակիցները թուրքական իշխանությունների կողմից հայաձանքների և ազատագրված չենթարկվեցին: Այս փաստը խոսում է այն մասին, որ ի տարբերություն հիշատակված անձանց, թուրքական իշխանությունները որոշակի մտադրություններից ելնելով «ներողության արշավի» մասնակից թուրք մտավորականներին պարզապես թույլ էին տվել խոսել այդ մասին, հակառակ պարագայում նրանք պետք է արժանանային Դինքի, Փամուկի կամ Զարաբուլուի ձակատագրին:

Դաքեայանն առավել նվաստացուցիչ ներման բանաձև է առաջարկում Հայաստանի համար, որը պետք է հանդես գա ոչ միայն իր, այլև Սփյուռքի անունից. «Հաշվի առնելով Թուրքիայի կողմից ճանաչումը, որը գնահատվել է ինչպես հարկն է, և վերջ դնելու համար այդ պատմական տարածայնությանը, որը չի դադարել բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի զարգացման համար, հայ ժողովուրդն ու հայկական սփյուռքն այն ընդունում են որպես քավարարում և փոխհատուցման պատվարժան և գոհացուցիչ միջոց»<sup>92</sup>: Այս տողերը թողնելով առանց մեկնաբանության՝ նշենք միայն, որ նման կարծիք արտահայտելու համար հեղինակը զուր է իրեն նեղություն պատճառել և շարադրել 370 էջ, խորացել Հայոց ցեղասպանության պատմության և միջազգային իրավունքի տարաբնույթ հարցերի մեջ, այլ կարող էր դա անել միանգամից:

Թուրքիայի կողմից ներողության քայլ կատարելու շարժառիթ հեղինակը համարում է Եվրամիությանն անդամակցելու նրա ձգտումը, սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ կառույցի ազդեցիկ երկրները հակված չեն Թուրքիային տեսնելու ԵՄ կազմում<sup>93</sup>: Հայաստանի ներելու շարժառիթն էլ Դաքեայանը փորձում է հիմնավորել «իրատեսությամբ», «խաղաղ սպրեյլու» ձգտումով<sup>94</sup> և այլն: Կարծում ենք, որ «իրատեսությամբ» Դաքեայանն ընդամենը խոստովանում է խնդրին իսկապես լուծում գտնելու՝ իր մասնագիտական անկարողությունը, ինչը, սակայն, նրան թույլ չի տալիս սեփական պարտվողական տրամադրությունները փաթաթել ամբողջ հայ ժողովրդի վզին: «Խաղաղ սպրեյլու» կոչն էլ պետք է հասցեագրվի Հայոց ցեղասպանությունը ժխտող, հայկական մշակութային կոթողները ոչնչացնող, Ստամբուլի հայ համայնքին անընդհատ լարվածության մեջ պահող, «Ակոս»-ի խմբագրապետ Դրանտ Դինքի սպանությունը կազմակերպող, անարեկիչներին հովանավորող և Ադրբեջանին հայ ժողովրդի դեմ պատերազմի հրահրող թուրքական պետությանը, որն ընդունակ չէ համակերպվել սեփական պատմության հետ, էլ ուր մնաց՝ հարևանների հետ խաղաղ սպրեյլը:

«Իրատեսությունից» դրդված՝ հեղինակը բավականին ջանասիրությամբ է ներկայացնում Արևմտյան Հայաստանի նահանգների ներկա ժողովրդագրական պատկերը, դրանց թուրքերով ու քրդերով բնակեցված լինելու հանգամանքը՝ մոռանալով, թե ինչի հետևանքով է դիմախեղվել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական նկարագիրը և չգիտակցելով, թե ինչպիսին այն կլիներ, եթե հայ ժողովուրդը ցեղասպանության ենթարկված չլիներ:

Նյութական հատուցման վերաբերյալ հեղինակը վերջում այն տեսակետն է հայտնում, թե քանի որ հայերի կրած վնասների հաշվարկը շատ դժվար է կատարել, ուստի իդեալական համադրությունն այն կլինի, որ փոխհատուցումները ստանան

91 Տե՛ս Դաքեայան Ռ., նշվ. աշխ., էջ 202, 378:

92 Տե՛ս Դաքեայան Ռ., նշվ. աշխ., էջ 372:

93 Տե՛ս Մարություն Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, էջ 143-177:

94 Դաքեայան Ռ., նշվ. աշխ., էջ 387:

օգնությունների և նվիրատվությունների ձև, որոնք Թուրքիան կհայթայթի ու կտրամադրի հայկական պետությանը տարբեր բնագավառների համար, որ Թուրքիան օգնի Հայաստանի զարգացմանը և արդիականացմանը, մասնակցի վերջինիս վերակառուցմանը և այլն<sup>95</sup>: Հարկ ենք համարում հիշեցնել, որ Թուրքիայի տնտեսությունն այսօր զարգանում է նաև հայերից բնագավթված ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին, և հայ ժողովուրդն ու Հայաստանը ցեղասպան պետությունից ողորմություն մուրալու որևէ կարիք չունեն: Որքան էլ դժվար լինի կատարել հայերի կրած նյութական վնասների հաշվարկը, դա մենք պարտավոր ենք անել և ստանալ գոնե մոտավոր պատկերը: Ուստի Դաքեայանին խորհուրդ կտանք թերահավատությամբ չվերաբերվել մյուս հետազոտողների կատարած գործին, նախապես կասկածի տակ չդնել այն մասնագետների աշխատանքները, որոնք շարունակում են իրենց պրպառումները: Պարզապես միամտություն է հավատալ, թե Հայաստանի կողմից ներում ստանալուց հետո Թուրքիան բարեգործություններ է անելու՝ օգնելով Հայաստանի զարգացմանը, ինչպես դա տեղի ունեցավ Գերմանիայի պարագայում<sup>96</sup>: Հեղինակը կրկին անտեսում է այն փաստը, որ անգամ հրեաների «Պահանջների կոնֆերանսի» հրավիրումը և Իսրայել պետության հետ Գերմանիայի կողմից կոնքեսմբուրգյան համաձայնագրի ստորագրումը ոչ այնքան նրա բարի կամքի դրսևորումն էր, որքան քաղաքակիրթ ազգերի ընտանիքում մնալու ձգտման արտահայտությունը:

Եզրակացությունների բաժնում կրկնվում և զարգացվում է Դաքեայանի կողմից իր աշխատության վերջին գլխում շարադրված «լուծման» առաջարկը: Հեղինակը խորապես սխալվում է կարծելով, թե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը աշխարհի հայերի համար բավարարման աղբյուր կհանդիսանա, քանզի հանցագործության զոհերն արժանի են այդ ճանաչմանը<sup>97</sup>: Աշխարհի հայությունը Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, այսինքն՝ բավարարումը (սատիսֆակցիան) կարող է դիտել ընդամենը որպես հատուցման գործընթացի առաջին քայլ, որին պետք է հաջորդեն արդեն բուն հատուցման փուլերը՝ վնասների փոխհատուցման (կոմպենսացիա) և վերադարձման (ռեստիտուցիա) գործընթացները: Ցեղասպանության զոհերը և ողջ հայ ժողովուրդն արժանի են ոչ միայն ճանաչման, ինչպես գտնում է Դաքեայանը, այլև իրենց խախտված իրավունքների վերականգնման:

**Եզրակացության մեջ** Դաքեայանը պարզապես կոչ է անում հայությանը՝ Թուրքիայի ճանաչումից հետո հրաժարվել ամեն պահանջից և պահանջատիրությունից՝ ինչ բնույթի էլ այն լինի: Իր կոչը «հիմնավորելու» համար հեղինակը առաջ է քաշում հայկական տարածքներում ապրող բնակչության, նրանց տների, արհեստների, արտադրությունների, դպրոցների, համալսարանների, հարստությունների և հողերի ձակատագրի հարցը, համարելով, որ այդ պատճառով հողային պահանջատիրությունն անտրամաբանական է և ոչ բանական<sup>98</sup>: Հարկ ենք համարում հիշեցնել հեղինակին, որ նախ՝ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք այն ամենն, ինչն այսօր տնօրինվում է այդ տարածքներում ապրող բնակչության կողմից իսկապես օրինական ձևով պատկանում է նրան, թե՞ այդ բնակչությունը ժառանգել է իր նախնիների կողմից հայերից բռնագավթված գույքերը: Դա հեշտությամբ կարելի է պարզել, եթե Թուրքիան վերանայի 2005 թ. օգոստոսի 26-ի իր գաղտնի հրահանգը, որով արգելվում է «Սեփականությունների և կադաստրի վարչությանը» հրապարակել օսմանյան շրջանի արդեն իսկ թվայնացված մատյանների տվյալները<sup>99</sup>, ինչի մասին Դաքեայանն ինքը քաջատեղյակ է: Ուստի եթե պարզվի, որ ներկայիս տերերը տնօրինում են հայերի գույքը, ապա միանշանակ պետք է ազատեն այն և արդեն թուր-

95 Տե՛ս նույն տեղում, էջ 394:

96 Տե՛ս նույն տեղում, էջ 374:

97 Տե՛ս նույն տեղում, էջ 406:

98 Տե՛ս նույն տեղում, էջ 407:

99 Տե՛ս նույն տեղում, էջ 397-398:

քական իշխանությունների խնդիրն է՝ նրանց գույքային պահանջների բավարարումը:

Այս խնդրի լուծմանն էր ուղղված Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը, որով ոչ միայն ուժը կորցրած էր ճանաչվում հայերի ունեցվածքի բռնագավթումն «օրինականացնող» թուրքական կառավարության «Լքյալ գույքի» մասին 1915 թվականի օրենքը, այլև առաջարկվում էին արևմտահայության սեփականության իրավունքների վերականգնման գործուն մեխանիզմներ: Թուրքական կառավարությունը համաձայնում էր, որ Ազգերի լիգայի Խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ հանձնաժողովներ՝ թուրքական կառավարության և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների և Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականության հետ կապված հարցերը և վեճերը քննելու և լուծելու համար: Այդ հանձնաժողովներն իրավասու էին լինելու իրամասներ տալ գույքի վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ կատարելու, տուժած համայնքի մահացած կամ անհետ կորած անդամներին պատկանող գույքի և ամեն տեսակ սեփականության վերադարձի, անշարժ գույքի վաճառքի կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերի չեղյալ հայտարարելու հարցերով, որոնք անվերապահորեն պետք է կատարվեին թուրքական իշխանությունների կողմից:

Թուրքական իշխանությունները նաև ընդունում էին, որ հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ այն լինի, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվի օրինական տերերին՝ հայերին: Ընդ որում վերադարձվող գույքը պետք է ազատվի ցանկացած պարտքից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել նոր տերերի տիրապետման ժամանակահատվածում և վերադարձվի օրինական տերերին՝ առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու<sup>100</sup>: Այսինքն՝ Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը հիմնված է Ex injuria jus non oritur<sup>101\*</sup> հայտնի իրավական սկզբունքի վրա, համաձայն որի՝ հանցագործության պտուղներից օգտվելը նույնպես հանցագործություն է համարվում:

Նշված հոդվածին լրացնելու էին գալիս 285 և 288 հոդվածները: 285-րդ հոդվածի համաձայն Թուրքիայից անջատված տարածքների բնակիչները, անկախ գույքի փոխանցման և դրա հետևանքով ծագած հպատակության փոփոխության հանգամանքներից, Թուրքիայի տարածքում իրենց սեփականության նկատմամբ պահպանում էին մինչև այդ տարածքների փոխանցումն ունեցած և թուրքական օրենսդրությամբ անրագրված բոլոր իրավունքները<sup>102</sup>: Իսկ 288-րդ հոդվածով նախատեսվում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ipso facto ձեռք բերած նախկին թուրքահպատակների՝ Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը տվյալ կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է նրանց վերադարձվեին՝ իրենց նոր կարգավիճակով<sup>103</sup>: Սա նշանակում էր, որ Թուրքիայի կողմից արևմտահայերին հպատակությունից զրկելը կամ վերջիններիս կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը թուրքական իշխանությունների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար:

Անկախ Սևրի պայմանագրի վավերացված չլինելու հանգամանքից, թուրքական օրինական իշխանությունները համաձայնվել են հայերի ունեցվածքի նկատմամբ իրավունքների վերականգնման այս մեխանիզմի հետ, որը լիովին կիրառելի է նաև այսօր՝ այն տարբերությամբ, որ այդ հանձնաժողովը ստեղծվի ոչ թե Ազգերի լիգայի խորհրդի, այլ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ներկայացուցչի նախագահությամբ:

100 Տե՛ս Հայաստանը...փաստաթղթերում, էջ 679-680:  
101՝ Լատ. «Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ»:  
102 Տե՛ս Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 65, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>  
103 Տե՛ս նույն տեղում, p. 66:

յամբ<sup>104</sup>:

Գերմանիայի կողմից Իսրայելին ու հրեաներին տրված նյութական հատուցման գործընթացից ելնելով՝ Դաքեայանը պետք է պատկերացնէր, որ Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման գործն էլ ավելի դժվարին ու տևական է լինելու և չփորձեր խնդիրը միտումնավոր կերպով պարզունակացնել: Ակնհայտ է, որ գույքային հարցերի հստակեցումից հետո հայերի անշարժ գույքը տասնամյակներ շարունակ ապօրինաբար տնօրինողներին այլ տարածքներում համարժեք պայմաններ առաջարկելն արդեն թուրքական իշխանությունների լուծելու խնդիրն է լինելու, ինչը կհանգեցնի նաև նրանց տեղափոխմանը Թուրքիայի արևմտյան շրջաններ:

Ինչ վերաբերում է Դաքեայանի այն պնդմանը, թե հայության զոհերի ժառանգներից ոչ մեկը չի վերադառնա նախնիների հողերում ապրելու, ապա, անշուշտ, ոչ ոք չի մեկնի Արևմտյան Հայաստան ապրելու, քանի դեռ վերականգնված չեն զոհերի ժառանգների իրավունքներն իրենց նախնիների գույքի նկատմամբ, և քանի դեռ ապահովված չէ նրանց այնտեղ վերաբնակեցման անվտանգությունը: Վերադարձը տեղի կունենա այն ժամանակ, երբ Թուրքիայի կողմից տրվող նյութական հատուցման միջոցները կուղղվեն Արևմտյան Հայաստանի վերադարձվելիք տարածքներում համապատասխան ենթակառուցվածքների ու բավարար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմանը:

**Գրախոսություն** ավարտում ենք այն տպավորությամբ, որ սույն աշխատանքով երիտասարդ իրավաբան Դաքեայանը պարզապես ցանկացել է խիստ «օրիգինալ» երևալ՝ ասելով այն, ինչը հրապարակայնորեն դեռ չի ասել ոչ մի հայ: Չի բացառվում նաև, որ նա նման տեսակետներ է արտահայտել որոշակի ազդեցությունների տակ՝ ձգտելով այդ կերպ արժանանալ Լիոնի համալսարանի իրավագիտության դոկտորի գիտական աստիճանին: Երկու դեպքում էլ դա պատիվ չի բերում հայ հետազոտողին:

Հայաստանում Դաքեայանի աշխատանքի հրատարակումը ազդանշան է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայն հայությունը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին համահայկական հռչակագրի ընդունումով և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման թղթածրարի պատրաստման նպատակով Հայաստանի ու Սփյուռքի իրավաբանների հատուկ հանձնախումբ ստեղծելով հանդերձ՝ չեն համակարգում այս ուղղությամբ տարվող աշխատանքները, չեն համախմբում հայ մասնագետներին, որպեսզի տվյալ հարցի հանդեպ, ի վերջո, ձևավորվի միասնական մոտեցում, և թույլ չտրվի նման ինքնագործունեություն: Մենք, անշուշտ, գրաքննության կողմնակից չենք, սակայն մեզ պետք է հաշիվ տանք, որ Հայոց ցեղասպանության իրավական բովանդակությունը սովորական ակադեմիական հարց չէ: Այն ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև համայն հայության համար ազգային անվտանգության հարց է, որի նկատմամբ ձեռնարկվող նման փորձարկումները ոչ միայն անթույլատրելի են, այլև՝ դատապարտելի:

Արմեն Յ. Մարության  
*Պատմ. գիտ. թեկնածու*

104 Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, էջ 108:

## Summary

Armen Ts. Marukyan – Rodney Dakessian, The legal effects of mass murder of Armenians in 1915 and their possible ways of judicial and extra-judicial resolution, Yerevan, “PRINTINFO”, 2015, 416 page.

**Keywords** – Armenian Genocide, the Treaty of Sèvres, codify, issue of compensation, International Court of Justice, the resolution for clemency, experiments

On the eve and during the 100th anniversary of the Armenian Genocide, doctoral thesis of the lawyer R. Dakessian on the legal basis of overcoming the consequences of the crime, which he defended in Lyon, was published as a book in the Armenian language in Armenia.

Dakessian’s work is mainly based on the writings of Western thinkers in the field of law, and it almost fully ignored Armenian sources. As to the works of the international lawyer and specialist in international law Yu. Barsegov, the author has completely ignored his contribution to this issue. Such a unilateral choice of authors and sources caused not only conflicting opinions and views in Dakessian’s work, but also led to the actual and conceptual mistakes.

The publication of Dakessian’s work is a signal that on the eve of the 100th anniversary of Armenian Genocide, though taking Pan-Armenian Declaration and creating a special committee of lawyers to overcome the consequences of the Genocide, the Republic of Armenia, nevertheless, does not systemize the work in this direction to create a common approach and to prevent such kind of initiative. Of course, we do not approve censorship, but we must be aware of the fact that the legal issue of the Armenian Genocide is not an ordinary academic question. This is very important not only for the Republic of Armenia, but it is a matter of national security for all Armenians hence similar experiments on this matter are not only unacceptable, but also should be condemned.

## Резюме

Армен Ц. Марукян – Родни Дакесян, Правовые последствия резни армян 1915 года и возможные методы судебных и внесудебных решений, Ереван, “ПРИНТИНФО”, 2015, 416 стр.

**Ключевые слова** – Геноцид армян, Севрский договор, кодифицировать, вопрос компенсации, международный суд, резолюция о помиловании, эксперименты

Накануне и во время 100-й годовщины Геноцида армян, докторская диссертация юриста Р. Дакесяна, посвященная правовым основам преодоления последствий этого преступления, которую он защитил в Лионе,

была издана в виде книги на армянском языке в Армении.

Работа Дакесяна в основном базируется на работах западных специалистов в области юриспруденции и в ней практически не использованы армянские источники, что касается международно признанного юриста-специалиста по международному праву Ю. Барсегова, то автор полностью проигнорировал его вклад в решение данного вопроса. Такой односторонний выбор авторов и источников стал причиной не только противоречивых мнений и взглядов в работе Дакесяна, но и привел к фактическим и концептуальным ошибкам.

Публикация работы Дакесяна является сигналом того, что накануне 100-ой годовщины Геноцида армян принимая всеармянскую декларацию и создав специальный комитет юристов по преодолению последствий геноцида, Республика Армения, тем не менее, не систематизирует работы в этом направлении для создания общего подхода и предотвращения такого рода самодеятельности. Конечно, мы не одобряем цензуру, но мы должны отдавать себе отчет в том, что юридический вопрос геноцида армян не является обычным академическим вопросом. Это касается не только Республики Армения, но также является вопросом национальной безопасности для всех армян, следовательно, подобные эксперименты не только неприемлемы, но и должны осуждаться.